ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 50-Լ «22» սեպտեմբերի 2022

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 23-Լ, N 34-Լ ԵՎ N 36-Լ ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը՝

Հրամայում եմ

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի օգոստոսի 29-ի՝ «2022-2023 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով 7-րդ և 10-րդ դասարանների «Արվեստ» ինտեգրված առարկայի լրամշակված ծրագրերը հաստատելու մասին» N 23-Լ, «2022-2023 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների «Կերպարվեստ» առարկայի լրամշակված ծրագրերը հաստատելու մասին» N 34-Լ և «2022-2023 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով 2-րդ և 5-րդ դասարանների «Մայրենի», 7-րդ և 10-րդ դասարանների

«Հայոց լեզու», 7-րդ դասարանի «Գրականություն», 10-րդ դասարանի «Հայ գրականություն» առարկաների լրամշակված ծրագրերը հաստատելու մասին» N 36-Լ հրամանները:

2. Սույն հրամանն ուժի մեջ է հրապարակման պահից:

ՆԱԽԱՐԱՐ՝ **ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ**

9/22/2022

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211